Գիտությունների Ազգային Ակադեմիայի համակարգից որպես նախագծերի հեղինակներ և կատարողներ ծրագրի նախագծում ընդգրկված են հետևյալ գիտահետազոտական հիմնարկները՝ Անօրգանական Զիմիայի Ինստիտուտ, Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտ, Ինժեներական Գեոֆիզիկայի և Սեյսմոլոգիայի Ինստիտուտ, Միկրոբիոլոգիայի Ինստիտուտ, Սոլեկուլյար Կենսաբանության Ինստիտուտ, Մանրէների Ավանդադրման Հանրապետական Կենտրոն, էկոլոգո-Նոոսֆերային հետազոտությունների Կենտրոն, Ինժեներական Կենտրոն:

ՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

1. Հայաստանի Հանրապետության 1996-1998թթ. Պետական Ներդրումների Ծրագիր:
2. Հայաստանի Հանրապետության 1996թ. Սոցիալ-Տնտեսական Ծրագիր:
3. Հայաստանի Մարդկային Ձարգացման Ձեկույց - 1995թ.:
4. Հայաստանի Մարդկային Ձարգացման Ձեկույց - 1996թ.:
5. Հայաստանի Ազգային էկոլոգիական Ծրագրի Հավելվածագր, 1993թ.:
6. Հայաստանի Ազգային էկոլոգիական Ձեկույց, 1993թ.:
7. *Բսկոյան Ա.* Հայաստանի բնապահպանական Օրենսդրությունը, Երևան, 1994թ.:
8. *Ter-Nikogosian V.* Development and Enforcement of new Armenian Environment Protection Legislation: Problems and Solutions. Fourth International Conference on Environmental Compliance and Enforcement. Thailand, 1996.
9. *Դանիելյան Կ.* Հայաստանի զոոպահպանության հիմնախարչերը Կայուն և Ձարգացման հայեցակարգի տեսակետից: Երևան, 1996թ.:
10. Բնապահպանության և Լկոնոմիկայի նախարարների Միջազգային կոնֆերանսի (Հելսինկի, 1996) նյութերը:
11. Էկոնոմիկայի նախարարության ու Բնապահպանության և ընդերքի նախարարության այլ նյութեր, 1996թ.:

Ստացված է 13 XI 1995.

ՎԱՍՏԱԿԱԶՄՑ ԳԻՏՆԱԿԱՆՈ

(Օնեղյան 70 - ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Լ Օրթելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր Վաղինակ Արապիճյանի Սիրզոյանի ծննդյան 70-ամյակը:

Վ. Սիրզոյանը ծնվել է 1926 թ. հունիսի 20-ին, Ստեփանավանի շրջանի Հորարծի գյուղում: Տեղի 7-ամյա դպրոցն ավարտելուց հետո, 1942 թ. ընդունվում է Ստեփանավանի անասնաբուժական-անասնաբուծական տեխնիկումը և այն ավարտում գերազանցության դիպլոմով: Նույն տարում էլ դառնում է երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի ուսանող:

Վաղ են երևան եկել Վ. Սիրզոյանի գիտական հետազոտություններ կատարելու հակումն ու ունակությունները: Երրորդ կուրսում պրոֆեսոր Սարգիս Աաքանյանի ղեկավարությամբ դիագնոստիկայի և ռենտգենոլոգիայի ամբիոնում ուսումնասիրել է ռենտգենյան ճառագայթահարման տարբեր դոզաների ազդեցությունը ճագարների արյան կարծիք գեղիկների մետեցման ռեակցիայի արագության վրա և պարզել, որ այդ պայմաններում կտրուկ կերպով այն արագանում է: Սիսթամանակ բացահայտել է, որ փոփոխության է ենթարկվում նաև լեյկոֆորմուլան ավելանում է լեյկոցիտների քանակը: Զորորդ կուրսում անխոնջ ուսանող, պրոֆեսոր Հայկ Ստեփանյանի առաջարկությամբ, ուսումնասիրում է շան բնական ստամոքսահյուսքի ազդեցությունը գորտի մեկուսացված սրտի գործունեության վրա և ապացուցում, որ շան 2-3 տոկոսանոց ստամոքսահյուսքը վերականգնում է գորտի սրտի դադարած աշխատանքը:

Ինստիտուտն ավարտելուց հետո սկսվում է Վ. Սիրզոյանի գիտա-աշխատանքային կենսագրությունը Հայաստանի ԳԱ Ֆիզիոլոգիայի ինստիտուտում, որտեղ որպես կրտսեր գիտական աշխատող նա ծավալում է ակտիվ թե՛ գիտական, և թե՛ հասարակական աշխատանքներ:

Վ. Սիրզոյանի տասնամյա գիտական գործունեության արդյունքները արտացոլվել են մի շարք գիտական հոդվածներում և նրա «Լեյկոցիտոզիան վերականգնման օնտոգենետիկ ուսումնասիրությունը կենդանիների էնոկլեպցիայի, ողնուղեղի կիսահատման և վերջույթների անդամահատման պայմաններում» թեմայով թեկնածուական ատենախոսությունում, որը հաջողությամբ պաշտպանել է 1959 թվին և արժանացել կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Խոսելով Վ. Սիրզոյանի գիտական աշխատանքի արդյունքների նշանակության մասին, ակադեմիկոս Էզրաս Հասարայանը նշել է. «Խանգարված ֆունկցիաների փոխհատուցման պրոբլեմը պատկանում է ժամանակակից կենսաբանության և բժշկագիտության առավել իրատես պրոբլեմների շարքին և մեծ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով»:

Վ. Սիրզոյանի զանազան վնասվածքների պայմաններում ներկենտրոնական կառույցների օնտոգենետիկ ուսումնասիրությանը նվիրված թեկնածուական թեզում և այլ աշխատանքներում բերված են նոր տվյալներ, որոնք հետաքրքրական են տեսական ու գործնական առումով, քանի որ կարող են օգնել բացահայտելու վերականգնողական և փոխհատուցողական պրոցեսների հիմքում ընկած օրինաչափությունները:

Ուսումնասիրելով տարբեր հասակի ճագարների անդամահատության հետևանքները, Վ. Սիրզոյանը հաստատել է, որ հեռացված վերջույթի ֆունկցիաների փոխհատուցումը ողջ մնացած վերջավորության կողմից կատարվում է տարբեր արագությամբ օրինակ, ճագարների մոտ, որոնք կույր են ծնվում, փոխհատուցումը ընթանում է դանդաղ, իսկ հավի ճտերի մոտ, որոնք դուրս են գալիս աչքերը բաց ու պատրաստի ֆունկցիաներով, փոխհատուցման պրոցեսները համեմատաբար արագ են ընթանում:

Զարգացնելով է Հասարայանի նյարդային համակարգի պլաստիկության էվոլյուցիոն տեսությունը, Վ. Սիրզոյանը պարզել է, որ ողնուղեղի վնասումներից հետո օնտո- կամ ֆիլոգենետիկ զարգացման ստորին աստիճանում գտնվող կենդանիների գլխուղեղի մեծ կիսագնդերը եական դեր չեն խաղում կոմպենսատոր հարմարանքների զարգացման գործում, այն դեպքում, երբ բարձրակարգ կենդանիների մոտ նրանց դերը դառնում է անզանահատելի:

Վ. Սիրզոյանը հանդիսանում է տեսողական ռեցեպցիայի բնագավառի ճանաչված գիտնականներից մեկը, որը հարստացրել է Ֆիզիոլոգիական գիտությունը մի շարք նոր, եզակի և հեռանկարային հետազոտություններով, նվիրված անալիզատորների նեյրոֆիզիոլոգիայի ակտուալ պրոբլեմներին, ինչպես նաև աչքի հիվանդությունների և տեսողության թուլության հարցերին, որոնք թույլ կտան բացահայտել արտաքին միջավայրի որոշ գործոնների բացասական ազդեցությունը, ինչպես տեսողության, այնպես էլ օրգանիզմի առողջության ու կենսագործունեության վրա: Նրա կողմից բավարար չափով ուսումնասիրվել է տեսողական անալիզատորի ծայրամասային հատվածում ընթացող պրոցեսների զարգացման ու կատարելագործման օրինաչափությունները, լուսազգացության ֆիզիոլոգիական մեխանիզմները, որոնք ապահովում են օրգանիզմի հարմարեցման ձևերն ու փոխազդեցությունները արտաքին միջավայրի հետ: Պրոբլեմի հույժ կարևորությունը հատկապես նկատելի է, որ գնալով աճում է աչքի ցանցենու հիվանդություններով տառապող հիվանդների թիվը կապված բնակչության կյանքի տևողության ավելացման և արտաքին միջավայրի բացասական գործոնների ազդեցության հետ: Այժմ աչքի ցանցենու պաթոլոգիան բժշկագիտության մեջ զբաղեցնում է առաջին տեղերից մեկը, որը շատ դեպքերում կարող է հանգեցնել տեսողության կորստի կամ թույլ տեսողության Հասակային առումով տեսողության ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունները Վ. Սիրզոյանին թույլ են տվել բացահայտել ոչ միայն սենսոր համակարգերի էվոլյուցիայի էությունը, այլ նաև որոշել օֆտալմոլոգիայի մի շարք գործնական խնդիրներ:

Ընդհանրացնելով հարկ է նշել, որ Վ. Սիրզոյանի բոլոր շրջանների հետազոտություններում գլխավոր շեշտը դրվել է տեսողական անալիզատորի պերիֆերիկ բաժնի կենսահոսանքների օնտո-ֆիլոգենետիկ զարգացման օրինաչափությունների պարզաբանման հարցերին ողնաշարավոր կենդանիների էվոլյուցիոն լայն սահմաններում: Նա առավել ուշադրություն է դարձրել ցանցաթաղանթի տեսողական ֆունկցիայի

զարգացման ու կատարելագործման օնտոգենետիկ ասպեկտներին, դրա զարգացման յուրահատկությունների կախվածությանը արտաքին միջավայրի պայմաններից, պաթո-մորֆոլոգիական և պաթո-ֆիզիոլոգիական փոփոխություններից, սուր անեմիզացիայից, լազերային ու ուլտրամանուշակագույն ճառագայթներով վնասումներից հետո ցանցաթաղանթի ճնշված ֆունկցիայի սպոնտան և բուժման վերականգնման պրոբլեմներին:

Վ.Ս.Սիրզոյանի հետազա հետազոտական գործունեության զարգացումը ընթացել է օնտոգենետիկ ողնաշարավոր կենդանիների, այդ թվում և մարդու ցանցաթաղանթի կենսահոսանքների ձևավորման, զարգացման ու կայունացման ընդհանուր օրինաչափությունների պարզաբանման հարցերին, որի հիման վրա առաջարկվել է աչքի ցանցենու ֆունկցիայի զարգացման եռետալային տեսությունը և բացահայտել յուրաքանչյուր տապաի առանձնահատկությունների օնտո-ֆիլոգենետիկ ասպեկտները: Հայտնաբերվել է, որ տեսողության զարգացման աստիճանը ուղղակիորեն կապված է կենդանիների կյանքի պայմաններից, որի իմացությունը կարող է նպաստել առողջության պահպանման պրոբլեմների լուծմանը:

Վ.Ս.Սիրզոյանի գիտահետազոտական աշխատանքների մի մասը նվիրված է նյարդային համակարգի վերականգնողական պրոցեսների ուսումնասիրությանը նորմալ և նրա տարբեր բաժինների վնասումների պայմաններում: Այդ աշխատանքներում մեծ տեղ է հատկացվում կենդանիների տեսողական համակարգի վնասումների ժամանակ վերականգնողական մեխանիզմների պարզաբանման հարցերին: Ձգալի տեղ է հատկացված տաքարյուն կենդանիների աչքի ցանցաթաղանթի վերականգնողական պրոցեսների ուսումնասիրությանը լազերային ճառագայթման և ֆերմենտային պրեպարատներով ներգործելուց հետո: Պարզվել է, որ ֆերմենտաթերապիայի ազդման պայմաններում վնասված ցանցաթաղանթի ֆունկցիոնալ կառուցվածքային վերականգնումը տեղի է ունենում բավական արագ ու լիարժեք, քան ստուգիչ կենդանիների նոտ: Նրա արած նորամուծությունները լայն արծագանք են ստացել և արժանվում գնահատվել Օդեսայի ակադ. Վ.Պ.Ֆիլատովի անվան ակնային հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտի առաջատար գիտնական Ա.Ի.Կոլոմիցեի կողմից: Վ.Ս.Սիրզոյանին ուղղված նամակում նա գրում է. «Հաշվի առնելով Ձեր տվյալները՝ մենք հեռանկարային ենք համարում ուսումնասիրել ֆերմենտային պրեպարատների ֆունկցիոնալ և լազերային թերապիայի գուգակցված ազդեցությունը ցանցաթաղանթի վրա»: Այդ ասպարեզում Վ.Ս.Սիրզոյանի որոնումները ակտիվորեն շարունակվում են նաև այժմ: Նա իր հետազոտություններում զբաղվել է ոչ միայն նյարդային համակարգի պլաստիկականության, այլ նաև վնասված այլ հյուսվածքների վերականգնողական պրոցեսների ուսումնասիրությամբ ինչպես գիտափորձում, այդպես էլ կլինիկայում:

Վերջին տարիներին Վ.Ս.Սիրզոյանը հատուկ ուշադրություն է նվիրել էնզիմոթերապիայի (լեկոպային, պապահին, լեկոզին, կոլալիզին) և ֆիզիկական գործունեության (լազերային ճառագայթախարում) բժշկության մեջ կիրառման ուսումնասիրություններին: Այդ աշխատանքներում ցույց է տրված, որ վնասված նյարդային և այլ հյուսվածքների էնզիմոթերապիան լազերաթերապիայի հետ գուգակցման ժամանակ, առավել բարերար ազդեցություն է գործում վերականգնողական պրոցեսների վրա: Ստացված տվյալների հիման վրա մշակվել են մի քանի մեթոդական հանձնարարականներ, որոնք լայն կիրառություն են գտել պրակտիկ բժշկության մեջ:

Վ.Ս.Սիրզոյանի բազմամյա գիտահետազոտական արդյունքները ամփոփված են 100-ից ավելի հրատարակված աշխատանքներում, այդ թվում նաև «Թոշունների լուսազգայությունը» մենագրությունում և ղոկտորական թեզում:

Վ.Ս.Սիրզոյանը գիտական գործունեությանը զուգընթաց կատարել և կատարում է նաև գիտականակերպչական մեծածավալ աշխատանք հանդիսանում է Լ.Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտի Գիտական խորհրդի անդամ, Հայաստանի «Ուղեղի հետազոտության միջազգային կազմակերպության» ասոցիացիան նրա թեկնածությունը ներկայացրել է ԻԲՐՕ-ի անդամության համար:

Նա իր նախածեռնությամբ ստեղծված «Ստեփանավանցի գիտնականների ընկերության» նախագահն է:

Թեև բուրբել է իր կյանքի յոթ տասնամյակը, Վ.Ս.Սիրզոյանը երիտասարդական ավյունով ու քանասիրաբար շարունակում է իր գիտական բեղմնավոր գործունեությունը և լուրջ ներդրում անում մեր անկախ Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման գործում:

Խ.Ն.Նսահապեկյան, Զ.Ս.Սարգսյան, Ռ.Մ.Նարությունյան

ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՍԻՍԱԿՅԱՆ

(Շննդյան 90-ամյակին)

Տաղանդաշատ հայ ազգն ինչպես անցյալում, այնպես էլ քսաներորդ դարում տվել է գիտության, մշակույթի, արվեստի ու մարդկային գործունեության բազմաթիվ այլ ոլորտների կարկառուն դեմքեր:

Շուտով բոլորում է նրանցից մեկի ակադեմիկոս Նորայր Սարտիրոսի Սիսակյանի ծննդյան 90 տարին Այսօր էլ, երբ տեսաժապավենի նման մտովին վերհիշում ու արդի այքերով ես նայում նրա գիտահասարակական գործունեությանը, ականա ցանկանում ես համեմատել նրան այն առաջին մեծության աստղերի հետ, որոնց գուցե և արդեն չկան. բայց նրանց արձակած պայծառ լույսը շարունակում է հասնել մեզ և դեռ երկար կառկայծի:

Այսօր կարծում եմ շատ տեղին է ևս մեկ անգամ հիշելու մեր բազմապատասխան ու պանծալի հայրերին ակնկալելով, որ նրանց օրինակը ոչ միայն հպարտություն կներշնչի, այլև կոզևորի ներկա սերունդներին, ձգտելու լինել լավագույնը գործունեության ընտրած բնագավառում:

Լինելով Նորայր Սիսակյանի աշակերտը, կցանկանայի նշել, որ մեկ հանրամատչելի և սահմանափակ ծավալով հողվածի սահմաններում լիովին նկարագրել նրա կյանքն ու բազմաբովանդակ գործունեությունը դժվարին խնդիր է: Նրա մասին, առանձին պատեի առիթներով գրված են մի քանի տասնյակ հողվածներ տարբեր լեզուներով և հատկանշական այն է, որ նրանցից մեծ մասը հրապարակվել են նրա կենդանության օրոք:

Նորայր Սիսակյանը ծնվել է 1907թ. հունվարի 25-ին Աշտարակում, գյուղացու ընտանիքում. Ղեռ պատանի հասակում գրկվելով ծնողներից նա կրում է բազմաթիվ գրկանքներ Նրա մանկության և պատանեկության տարիները համընկել են հայ ժողովրդի կյանքի ծանր տարիների հետ: Սակայն մեծ իր պատանու ուսման ձգտումը, և նա ավարտելով դպրոցը 1928թ. ընդունվում է Երևանի Պետական համալսարան, իսկ մեկ տարի անց մեկնում Մոսկվա ուսումը շարունակելու: Տիմիրյազևի անվ. Գյուղատնտեսական ակադեմիայում:

Իր ողջ կյանքի ընթացքում նա ձգտել է սովորել, լրացնել իր գիտելիքները: Լինելով արդեն հանրաճանաչ գիտնական, և Սիսակյանն իր աշակերտներին ասում էր. «Նետազոտողն իրավունք չունի հանգստանալու և ապրելու նախկինում ձեռք բերած հաջողություններով, նա յուրաքանչյուր օր պետք է լրացնի իր գիտելիքները ինչ-որ նոր բանով, սովորելով շրջապատից, զրքերից ու բնությունից»: Ղեռ ինստիտուտում սովորելու տարիներին նա ցուցաբերում է փայլուն ընդունակություններ, աշխատասիրություն և սեր գիտահետազոտական աշխատանքի նկատմամբ: Սննկատ չանցան նրա այդ հատկությունները և 1932թ. սկսվեց նրա անմիջական գիտական գործունեությունը, որպես ասպիրանտ հանրառայն գիտնական-ակադեմիկոս Ղ. Պրյանիշչիկովի ղեկավարությամբ: Հետագայում (1935թ.), վերջինիս առաջարկով, երիտասարդ գիտնականը տեղափոխվում է ԽՍՀՄ ԳԱ Նորաստեղծ կենսաքիմիայի ինստիտուտ շարունակելու իր գիտահետազոտական աշխատանքները ակնամկոր կենսաքիմիկոս Ս. Բախի ղեկավարությամբ: Բազմիցս առիթներ են եղել բնութագրելու այն ժամանակ տակավին երիտասարդ գիտնական և Սիսակյանին, որպես այքի ընկնող ընդունակությունների ու արպտող մտքի տեք մասնագետի Սի առիթով ակադեմիկոս Բախն ասել է. «Ես սիրում եմ զրուցել Նորայր Սիսակյանի հետ, ինձ գրավում է նրա նպատակասլացությունը և արագ կողմնորոշվելու ընդունակությունը, նրա սիրտն արագ է բարախում»: Հարագատ մնալով խոշորագույն գիտական կենտրոնին, նա մինչև կյանքի վերջը շարունակեց իր գիտահետազոտական աշխատանքներն ինստիտուտում, որպես լաբարատորիայի վարիչ և փոխտնօրեն:

Բազմաբովանդակ ու բազմակողմանի են և Սիսակյանի գիտական հետաքրքրությունները և հետազոտությունների շրջանակն ու բնագավառները: Անդրադառնալով նրա գիտական ժառանգությանը առաջին եզրակացությանը որ հանգում ես, դա այն է, որ միայն արտակարգ տաղանդի ու կազմակերպչածության, խորը գիտելիքներ ունեցող գիտնականը կարող էր իր ուրույն խոսքն ասել այդ չափազանց տարաբնույթ ու խորին հարցերի բնագավառում:

Եթե փորձենք խմբավորել նրա կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքները, ապա կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական ուղղությունները: Նյութափոխանակությունը կենդանի օրգանիզմում, տեխնիկական կենսաքիմիա, ենթաբջջային կառուցվածքների ֆունկցիոնալ կենսաքիմիա և տիեզերական (կոսմիկական) կենսաբանություն:

Իր գիտական գործունեության սկզբնական տարիները գիտնականը նվիրել է բույսերի կենսաքիմիայի և ֆիզիոլոգիայի մի շարք կարևորագույն հիմնարար և գործնական խնդիրներին, այն է շաքարանյութերի նյութափոխանակության ու կուտակման, իսկ այնուհետև բույսերի երաշտադիմացկունության օրինաչափությունների պարզաբանման խնդիրներին:

Պրպտուն միտքը, մեծ ընդունակությունները, խորը գիտելիքները և նպատակին հասնելու հետևողականությունը հաջողությամբ պատկեցին գիտնականի ջանքերը նա արժանացավ սկզբում գիտության քեկնածուի, իսկ այնուհետև 33 տարեկան հասակում գիտության դոկտորի գիտական աստիճանի: Նշենք, որ նշված բնագավառներում նրա հայտնաբերած օրինաչափություններն այժմ էլ արդիական են: Օրինակ, ցույց է տրված, որ ջրի սուղ պայմաններում առաջին հերթին խանգարվում են շաքարանյութերի, սպիտակուցների նյութափոխանակությունը, ֆոտոսինթեզի ու շնչառության բնույթը և այդ պրոցեսներին մասնակցող ֆերմենտների ակտիվությունը: Ստացված արդյունքները ոչ միայն պարզաբանում էին մի շարք հիմնարար հարցեր, այլև հիմք հանդիսացան բույսերի նոր երաշտադիմացկուն սորտերի սելեկցիայի համար:

Հետագայում և Սիսակյանն իր ուշադրությունը կենտրոնացնում է բույսերի ենթաբջջային գոյացումների կենսաքիմիայի խնդիրների ուսումնասիրմանը, և նա հիրավի համարվում է նաև ենթաբջջային գոյացումների ֆունկցիոնալ կենսաքիմիայի ուղղության հիմնադիրը, որը հետագայում արագ զարգացում ապրեց և դարձավ կենսաբանության կարևորագույն ու հանգույցային բնագավառներից մեկը:

Միայն գիտական կանխատեսության հզոր ունակությամբ օժտված գիտնականը կարող էր կռահել և

հիմնադրել այդ գիտական նոր ուղղությունը, որի դերը կենդանի բջիջների գործունեության, նյութափոխանակության և ընդհանրապես կենսաբանական ու բժշկության տարբեր հարցերի պարզաբանման գործում դժվար է գերազնահատել: Նշանակալից տեղ են գրավում գիտնականի ուսումնասիրությունները նվիրված բույսերի ենթաբջջային գոյացումների քլորոպլաստների կենսաքիմիային, ուր տեղի է ունենում օրգանական նյութերի առաջնային սինթեզը՝ ֆոտոսինթեզի պրոցեսում: Նա իր աշակերտների հետ միասին ցույց տվեց, որ այդ գոյացումները չափազանց բարդ կենսաքիմիական համակարգեր են՝ օժտված բազմաֆունկցիոնալ հատկություններով: Գույց տրվեց նաև բազմապիսի կենսակատալիզատորների առկայությունը, և նրանց մասնակցությունը նյութափոխանակության պրոցեսներում: Ապացուցվեց այդ ենթաբջջային գոյացումների կարևորագույն նշանակությունը բջիջների և ամբողջ օրգանիզմի կենսագործունեության պրոցեսներում: Ն.Սիսակյանի նշված բնագավառի նվաճումները լայն ճանաչում գտան գիտական հանրության կողմից, և 1952թ. արժանացան խՍՀՄ պետական մրցանակի:

Շարունակելով իր հետազոտությունները ենթաբջջային գոյացումների կենսաքիմիայի բնագավառում, ակադեմիկոս Ն.Սիսակյանին հաջողվեց առաջին անգամ հայտնաբերել մի շարք կենսական պրոցեսներ, որոնք հետագայում հիմնադիր ուղղություններ հանդիսացան կենսաքիմիայի բնագավառում: Այսպես, նրան հաջողվեց կանխատեսել և ապացուցել, որ քլորոպլաստները ավտոնոմ գոյացումներ են, ուր ոչ միայն տեղի են ունենում տարբեր նյութերի առաջնային սինթեզ ֆոտոսինթեզի պրոցեսում, այլև ընդունակ են սինթեզելու յուրօրինակ սպիտակուցներ, քանզի առաջին անգամ ցույց տրվեց ժառանգակիր նյութի (ՂԼԹ) և ռիբոսոմների առկայությունն այդ գոյացումներում:

Նշանակալից տեղ են գրավում նաև ենթաբջջային այլ գոյացումների կորիզի, միտոքոնդրիումների, բջջային թաղանթների կենսաքիմիային նվիրված հարցերի ուսումնասիրությունները, որոնք ոչ միայն լույս սփռեցին մեր պատկերացումներին բջիջներում ընթացող կենսական պրոցեսների վրա, այլև զգալի կերպով նպաստեցին կենսաքիմիայի և մոլեկուլյար կենսաբանության նոր ուղղությունների զարգացմանը:

Ստացված արդյունքները լայն ճանաչում գտան գիտական հասարակության կողմից, և գաբև տվեցին այդ ուղղության զարգացմանը նաև աշխարհի տարբեր երկրներում:

Ակադեմիկոս Ն.Սիսակյանն, ավելի քան շատ-շատերը, զգում էր այս կամ այն գիտահետազոտական խնդրի կարևորությունը: Նա առաջիններից մեկն էր, որ սկսեց ուսումնասիրել ռադիոակտիվ ճառագայթման ազդեցությունը կենդանի բջիջների, ենթաբջջային կառուցվածքների ֆունկցիոնալ ակտիվության վրա: Գիտնականին հաջողվեց ի հայտ բերել մի շարք օրինաչափություններ, փոփոխություններ, որոնք առաջանում են օրգանիզմներում ռադիոակտիվ ճառագայթման հետևանքով: Ստացված արդյունքները, որոնք քննարկվեցին առումային ենթադրաբանական խաղաղ օգտագործմանը նվիրված մի շարք միջազգային գիտաժողովներում լայն ճանաչում գտան և հետագայում իրենց զարգացումն ստացան ինչպես մեր երկրում, այնպես էլ աշխարհի գիտական շատ կենտրոններում:

Ն.Սիսակյանը բազում տարիների գիտական գործունեության ընթացքում մշտապես առաջնային խնդիրներից մեկն է համարել տեսական հարցերի սերտ կապը կենսական անհրաժեշտ խնդիրների լուծման հետ և այդ վաղաքագիծ ուղեկցել է նրան իր ողջ կյանքի ընթացքում: Նա քաջ գիտակցում էր գիտության անզերազանցատեսանելի դերը ինչպես մարդկության կենսական անհրաժեշտ խնդիրների, այնպես էլ պետական-քաղաքական հարցերի լուծման գործում: Այդ իսկ պատճառով նա մշտապես զբաղվել է նաև տեխնիկական կենսաքիմիայի հարցերով: Այսպես, Հայրենական մեծ պատերազմի տարիներին հաջողությամբ իրականացվեց կառավարության հանձնարարությունը մարտիկներին վիտամինային հարուստ սննդով ապահովելու առաջադրանքը և արժանացավ կառավարական պարգևի:

Մեծ էր նաև նրա մասնակցությունը հայրենական զինեզործության ու կոնյակի արդյունաբերության գիտական հիմունքների մշակման գործում: Գիտնականը մեծ սիրով շատ ժամանակ է տրամադրում Հայաստանի խաղողի տարբեր սորտերի ուսումնասիրմանը՝ նպատակ ունենալով հայտնաբերել այն առանձնահատկություններն ու պոտենցիալ հնարավորությունները, որոնք ճիշտ օգտագործման դեպքում կարելի է ստանալ բարձր որակի զինեզործ ու կոնյակներ:

Ն.Սիսակյանի նախածնունդային Հայաստանում Այգեզինեզործական ինստիտուտում կազմակերպվում է զինու և խաղողի կենսաքիմիայի լաբորատորիա, որի ղեկավարն ու խորհրդատուն էր երկար տարիներ Ձգալի են Ն.Սիսակյանի ու նրա դպրոցի հաջողությունները նաև այս բնագավառում: Պարզաբանվեցին այն կենսաքիմիական պրոցեսները, որոնք պայմանավորում են խմիչքի բուրմունքը, համն ու սննդարար հատկանիշները: Ուսումնասիրելով Հայաստանի աշխարհառչակ կոնյակների, ինչպես նաև խերեսային զինեզործ ու շամպայնի ստացման պրոցեսում ընթացող կենսաքիմիական պրոցեսները, ի հայտ բերվեցին նոր օրինաչափություններ, և կատարելագործվեցին եղած տեխնոլոգիաները: Կատարված ուսումնասիրությունները հիմք հանդիսացան այս բնագավառի զարգացման համար տարբեր հանրապետություններում: Բազմեցին համապատասխան լաբորատորիաներ, որոնցից մեկն էլ Ա.Բախի անվ. կենսաքիմիայի ինստիտուտում: Այդտեղ էլ սկսվեցին հրապարակվել գիտական ժողովածուներ նվիրված զինեզործության կենսաքիմիայի հարցերին, որոնք խմբագիրն էր ակադեմիկոս Ն.Սիսակյանը և որոնք բարձր գնահատվեցին և լայն ճանաչում գտան մասնագետների շրջանում:

Շնորհիվ կենսաբանության բնագավառում ունեցած խորը և բազմակողմանի գիտելիքներին, ակադեմիկոս Ն.Սիսակյանին «Կոսմիկական դարաշրջանի» նախաշեմին հաջողվեց լինել այն գիտնականների առաջին շարքերում, որոնք հիմնադրեցին այն հիմքերն ու ուղղությունները, որոնք հետագայում նպաստեցին տիեզերագնացության արագ զարգացմանը: Նրա կողմից հիմնադրվեցին գիտության այդ նոր, նախկինում չուսումնասիրված բնագավառի զարգացման ուղղություններն ու նպատակները: Նրա անմիջական դերակատարությամբ կազմակերպվեցին նոր գիտահետազոտական կենտրոններ, որտեղ սկսվեցին հետազոտական աշխատանքներ տիեզերական կենսաբանության ու բժշկության բնագավառում: Նրա նախածնունդային իրականացվեցին մանրակրկիտ ուսումնասիրություններ տիեզերքի անսովոր, յուրօրինակ գործոնների՝ անկշռելիության, երկրի ձգողականության, ճառագայթման, փակ սիստեմների էկոլոգիայի.

տիեզերագնացների ընտրության ու պատրաստման գիտական հիմունքների, օրգանիզմների նյութափոխանակության և այլ հարցերի ուղղությամբ: Անզերագնահատելի են և Սիսակյանի և Նրա աշակերտների այս բնագավառում ձեռք բերած հաջողությունները, որոնք գտան իրենց գործնական կիրառումը տիեզերական թռիչքների կազմակերպման գործում: Եւ այն գիտնականներից մեկն էր, որի կարծիքը որոշիչ էր այս կամ այն տիեզերագնացի թռիչքի համար: Նրա աշակերտներից մեկը ակադեմիկոս Գազենկոն, որը հետագայում ղեկավարում էր տիեզերական կենսաբանության և բժշկության բնագավառը, երբ ԽՍՀՄ ԳԱ-ն նշում էր և Սիսակյանի մահվան մեկ տարին, իր ելույթում ասաց, որ այն ժամանակ շատ քչերը գիտեին, որ ակադեմիկոս և Սիսակյանը տիեզերական կենսաբանության բնագավառում նույնն էր, ինչ Կորոլյովը տիեզերական տեխնիկայի բնագավառում: Ասկայն այսքանով չէր սահմանափակվում Նրա գործունեությունը այս բնագավառում: Գիտնականի նախածեղությունը կազմակերպվեցին Նոր պարբերական հրատարակություններ «Տիեզերական կենսաբանության պրոբլեմները», «Սարդու առաջին թռիչքը տիեզերք», որոնց ղխավոր խմբագիրը հանդիսանում էր ինքը՝ և Սիսակյանի նախածեղությամբ ու անմիջական ղեկավարությամբ ՅՈՒՆԵՍԿՈ-ի շրջանակներում կազմակերպվեցին առաջին միջազգային համաժողովները նվիրված մարդը տիեզերքում և տիեզերական կենսաբանության արդի կարևորագույն հարցերին:

Ի ճանաչումն և Սիսակյանի անզնահատելի ծառայությունների տիեզերական կենսաբանության ու բժշկության կազմակերպման ու զարգացման բնագավառում նա ընտրվում է Միջազգային աստղագնացության ակադեմիայի փոխ-արեզիդենտ, Միջազգային աստղագնացության ֆեդերացիայի կենսաստղագնացության կոմիտեի նախագահ և շենք նաև, որ զնահատելով Նրա ծառայությունները, Լուսնի վրա մի մեծ աշխարհագրական տեղամաս «Սիսակյանի ծով» անվանումն է ստացել:

Այս ամենին ավելացնենք նաև այն, որ նա մի քանի հարյուր գիտական հոդվածների և մենագրությունների հեղինակ է, որոնք թարգմանվել են բազմաթիվ լեզուներով:

Ակադեմիկոս և Սիսակյանը որպես անհատականություն, իր մեջ զուգակցում էր տարաբնույթ արտակարգ ընդունակություններ: Լինելով խոշոր անհատականություն գիտության բնագավառում, որը ոչ միայն հիմնադրեց և զարգացրեց Նոր ուղղություններ, դաստիարակեց ճանաչված գիտնականների մի հոծ բանակ, որն անվանվեց Սիսակյանի դպրոց, միաժամանակ գիտության տարանդակվոր կազմակերպիչ էր: Ընտրվելով ԽՍՀՄ ԳԱ ակադեմիայի կենսաբանական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, հետագայում ղխավոր գիտական քարտուղար, բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի նախագահի տեղակալ, պետական մրցանակների կոմիտեի անդամ, իր մեծ տաղանդին հատուկ հմտությամբ նա մեծ աշխատանք ծավալեց գիտության կազմակերպման ու զարգացման բնագավառում:

Ակադեմիկոս և Սիսակյանը հանդիսացել է նաև մի շարք անագրերի՝ ԽՍՀՄ ԳԱ «Վեստնիկ», «Իզվեստիա», «Քիմիչմիա» և այլն, ղխավոր խմբագիրը: Գիտնականը հանդես է եկել բազմաթիվ դասախոսություններով շատ երկրներում՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Ճապոնիա, Գերմանիա, Անգլիա, Բելգիա և այլն:

Միջազգային գիտական հասարակության կողմից բարձր են գնահատվել Նրա գիտական նվաճումները, նա արժանացել է Ա.Բախի, Սեչենիովի անվան մրցանակների, պարգևատրվել է Ֆրանսիայի Պաստյորի ինստիտուտի, Բելգիայի Լյեժի համալսարանի, Բալզակի միջազգային կոմիտեի ոսկե մեդալներով: Ջաջ գիտակցելով գիտության պրոգրեսի ու միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը մարդկության բարոքության ու խաղաղության պահպանման գործում նա իր մեծ ծառայություններն է մատուցել միջազգային մասշտաբով գիտությունը մարդկության բարեկեցությանը ծառայելու համար: Հանդիսանալով միջազգային Պագուտչովյան մի շարք համաժողովներում ԽՍՀՄ ներկայացուցիչ նա իր մեծ լուսնային ներդրել խաղաղության պահպանման գործում, որի համար ըստ արժանվույն են գնահատվել գիտնականի ցանքերը նաև այդ բնագավառում, պարգևատրվել է խաղաղության միջազգային կոմիտեի մեդալով ու պատվոգրով: Միջազգային բնագավառում առանձնակի տեղ զտավ նրա գործունեությունը Սիսակյանի Ազգերի կազմակերպության, կուլտուրայի, լուսավորության և գիտական կապերի տարածման ու հաստատման կոմիտեում (ՅՈՒՆԵՍԿՈ) սկսած 1956 թ. սկզբում որպես կատարողական և կոնսուլտատիվ կոմիտեների անդամ, իսկ հետագայում միաժամանակ ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՈ-ի 13-րդ սեսիայի ղխավոր քարտուղար: Այս կապակցությամբ նրա արտասանած ճառը, որը նվիրված էր գիտությունը մարդկության բարոքությանը ծառայեցնելու հարցերին անվանվեց «գիտության ծոցերը»:

Ակադեմիկոս և Սիսակյանը մեծ էր ոչ միայն որպես գիտնական ու գիտության կազմակերպիչ, այլ նաև որպես անհատականություն: Սի առիթով ակադեմիկոս Կելդիչն ասել է «Մենք զգում ենք Նորայր Սիսակյանի կարիքը, մեզ չի հերիքում նրա սուր ընկալումը, նրա պահանջկոտությունը իր և ուրիշների նկատմամբ, և այդ ամենի հետ նրա խոր մարդկային վերաբերմունքը հանդեպ մարդը»:

Ապրելով հեռու իր հայրենիքից և լինելով գերբարդված, նա այնուամենայնիվ մշտապես հետաքրքրվում էր իր ժողովրդի կյանքով և հատկապես գիտության զարգացման հարցերով: Նրան շատ հուզում էին այն ամենն ինչ կատարվում էր Հայաստանում: Մշտապես աջակցում էր հայ գիտնականներին բազմապիսի հարցերում: Բավական է նշել, որ միայն նրա շնորհիվ այն ժամանակ դժվարիմ պայմաններում Հայաստանի ԳԱ կազմում քացվեցին երկու խոշոր գիտական կենտրոններ՝ կենսաբիոմիայի ու հիդրոպոնիկայի և ագրոբիոմիական պրոբլեմների ինստիտուտները, որոնք հետագայում դարձան լայն ճանաչում գտած գիտահետազոտական կենտրոններ:

Հայ ժողովուրդը նույնպես արժանին է հատուցել իր տաղանդավոր գավակին, բացելով տուն-թանգարան նրա հայրենիքում Մշտառակում, կանգնեցնելով նրա արձանը, դարոց ու փողոցներ կոչելով նրա անունով: Այդպիսին էր և Սիսակյանը, որն ապրեց ընդամենը 59 տարի անմնացորդ նվիրվելով գիտությանը, հայրենիքին ու ժողովրդին:

Լ.Ա.Մարկոսյան

РОМЕЛЛА МИХАЙЛОВНА ГАЛАЧЬЯН

Отечественная биология понесла тяжелую утрату: 30 июня 1996г. скончалась Ромелла Михайловна Галачьян - заслуженный деятель науки Армении, доктор с/х наук, научный консультант Института микробиологии Национальной Академии.

Р.М.Галачьян родилась в 1910г. в г. Коканде (Узбекистан) в семье рабочего. С переездом семьи на постоянное жительство в Ереван Ромелла Михайловна поступила на садово-виноградный факультет Ереванского сельскохозяйственного института, который окончила в 1931 году. По окончании ВУЗа работала инструктором по борьбе с вредителями и болезнями в ОБВ, откуда вскоре была командирована на курсы организаторов Службы учета при Всесоюзном институте защиты растений в Ленинграде, по окончании которых Р.М. Галачьян работала в Ереване в качестве фитопатолога. В течение 1933-37гг. Р.М. Галачьян училась в аспирантуре ВИЗРа, которую окончила успешной защитой диссертации на степень кандидата сельскохозяйственных наук. В период 1938-1941гг. работала на Московской станции защиты растений старшим научным сотрудником, а в дальнейшем - заведующей лабораторией бактериозов.

С 1941 года до своей кончины Р.М. Галачьян работала в Институте микробиологии НАН РА, сначала старшим научным сотрудником, затем заведующей лабораторией микробных регуляторов, а позднее - научным консультантом. В 1955г. она успешно защитила диссертацию на ученую степень доктора сельскохозяйственных наук.

Научную деятельность Р.М. Галачьян отличали целеустремленность и исключительная последовательность в решении поставленных задач. Она являлась одним из ведущих специалистов по изучению бактериозов растений и внесла существенный вклад в эту область. Уже в первые годы научной деятельности объектом ее разносторонних исследований явились бактериозы фасоли и огурца, этиопатогенез и меры борьбы с ними. Благодаря ее исследованиям была установлена высокая эффективность серологических методов в ранней диагностике этих инфекций.

Р.М. Галачьян принадлежит многолетние исследования бактериозов опончных и технических культур. Ею были обнаружены в Армении многие бактериальные болезни, подробно изучены пути их распространения и рекомендованы меры борьбы с ними. Особенно много Ромеллой Михайловной было сделано в исследовании бактериального рака томатов, опубликованная ею в 1958г. монография стала крупным вкладом в эту область науки.

Впервые выявив в Армении это вредоносное карантинное заболевание, Р.М. Галачьян провела углубленные и разносторонние исследования, применив в своей работе ряд новых методов изучения как динамики заболевания, так и биологии его возбудителя. Она подробно изучала вопросы этиологии, механизма развития болезни, диагностики, условия распространения и вредоносности заболеваний, морфологические особенности возбудителя и его изменчивость.

В течение ряда лет Р.М. Галачьян проводила оригинальные исследования по изучению фитонцидных свойств различных растений. На основании полученных данных ею были обоснованы заключения об определенной роли фитонцидов в иммунитете растений. Эти данные, доложенные на Всесоюзных конференциях, вызвали большой интерес у многих фитопатологов.

Значительный научно-практический интерес представляют выполненные Р.М.Галачьян в последние годы работы по изучению возбудителей опухолей свеклы и других растений. Ей удалось выделить из культур этих бактерий метаболиты, резко стимулирующие рост ряда растений. В частности, было показано резкое усиление процессов корнеобразования некоторых трудно укореняющихся сортов винограда при обработке этими метаболитами. Эти исследования были доведены до широких производственных испытаний.

Р.М.Галачьян - автор 2 монографий и более 150 научных работ. Она активный участник многих союзных и международных конференций, пользовалась высоким авторитетом среди фитопатологов страны.

Усилиями Р.М.Галачьян подготовлены многочисленные кадры высококвалифицированных специалистов и научных работников.

Р.М.Галачьян отличалась исключительное трудолюбие, преданность науке, скромность и чуткое внимание к товарищам по работе.

Ромелла Михайловна Галачьян останется в памяти всех ее коллег и друзей.

Группа товарищей

ЕВА САРКИСОВНА АРУТЮНЯН

Научная общественность и редакция "Биологического журнала Армении" понесли тяжелую утрату, скончалась Ева Саркисовна Арутюнян - ответственный секретарь редакции и один из крупнейших микологов.

Е.С. Арутюнян родилась в 1924 году в Иркутске. Переехав в Армению, она поступила в Ереванский государственный университет, который окончила в 1951 г. по специальности "Ботаника". Затем поступила в аспирантуру ЕГУ на кафедру питных растений и в 1954 г. окончила ее успешной запиской диссертации на ученую степень кандидата биологических наук.

После защиты диссертации Ева Саркисовна продолжила научно-исследовательскую деятельность, совмещая ее с педагогической. С 1952 г. она ассистент, а с 1954 г. - доцент кафедры морфологии и систематики растений ЕГУ.

В 1956 г. Е.С. Арутюнян выехала по семейным обстоятельствам из республики и в течение года работала в Ташкенте. С 1958 по 1981 г. она работала в Москве сначала в ВИИТИ, а с 1961 г. - доцентом кафедры фитопатологии Московской сельскохозяйственной академии им. К.А. Тимирязева.

Е.С. Арутюнян - автор монографии, практикума и 20 научных статей по актуальным вопросам лесной и сельскохозяйственной фитопатологии. Ее работы широко известны в кругу специалистов.

Ева Саркисовна никогда не прерывала своих связей с Арменией, с армянскими коллегами. В 1984 г. она переехала в Ереван и в том же году была утверждена в должности ответственного секретаря "Биологического журнала Армении".

Ева Саркисовна имеет большие заслуги в обеспечении качественного издания центрального органа биологической науки республики. Своей искренней преданностью делу, добросовестностью, высокой ответственностью она снискала уважение у членов редколлегии, сотрудников редакции и широкого круга авторов журнала. С характерным для нее стремлением к поиску, она старалась найти новые, часто оригинальные решения той или иной проблемы, связанной с изданием журнала, помогла молодым перспективным авторам почувствовать себя увереннее, ускоряя публикацию их статей в журнале.

Искренняя и отзывчивая, и в то же время требовательная и принципиальная, Ева Саркисовна навсегда останется в памяти тех, кто знал ее и работал с ней.

Редколлегия и редакция "Биологического журнала Армении"

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Աղաքանյան Ա.Ս.</i> Տոմատի տարբեր ծևերի և հիբրիդների ռեակցիան ծաղիկների ամորժատման նկատմամբ	3
<i>Հարությունյան Ռ.Ս., Սարտիրոսյան Կ.Յ., Շիրինյան Գ.Ս., Դազարյան Ա.Ա., Զոչար և Հ.Պ.</i> Թատմական Հայաստանի տարածքից գաղթածների անտրոպոգենետրկական ուսումնասիրությունը Ալաշկերտ (և Գետաշեն գյուղի բնակիչներ)	10
<i>Սինասրեկյան Լ.Ա., Դանիելյան Ի.Ս., Դարիրյան Զ.Կ., Վարդևանյան Պ.Օ., Փանոսյան Գ.Ա.</i> Դևձ-ի մեթիլացման մակարոդսկների և հալման պարամետրերի տարբերությունը հացազգիների ծլող սերմերում	14
<i>Պետրոսյան Ս.Թ., Աղաքանյան Զ.Ա., Շամցյան Ս.Գ., Պոպով Զ.Գ.</i> Կալլուսագոյացումը և օրգանոգենեզը տոպինամբուրի մեկուսացված հյուսվածքային կուլտուրայում	18
<i>Զաքարյան Ա.Պ., Կարագուլյան Է.Ա., Թոչումյան Ս.Հ.</i> Սիջավայրի որոշ ֆիզիկա-քիմիական պարամետրերի փոփոխությունը բակտերիաների անաերոբ աճի ընթացքում	21
<i>Աղաբալյան Ա.Ս., Զաքարյան Ռ.Ա., Դավթյան Օ.Յ.</i> Որոշ բիոպոլիմերների հակաուռուցքային ակտիվության համեմատական գնահատականը	26
<i>Հովհաննիսյան Հ.Գ., Բարսեղյան Ա.Ա.</i> Escherichia coli K-12 -ի սպիտակուց սինթեզող ապարատի կոմպոնենտների մուտացիաների ազդեցությունը կապսուլյար բազմաշաքարների առաջացման վրա	30
<i>Դազանյան Ա.Ֆ., Սամվելյան Վ.Ս., Զաքարյան Ռ.Ս.</i> Պոլիմուլեոսոիդները որոշ հատկանիշների ուսումնասիրությունը հատուկ ռեգեպցիայի վկայությունը	34
<i>Աղանյան Ս.Օ.</i> Հալոֆիլ բացիլների նոր շտամները	38
<i>Վարդանյան Ն.Ս.</i> Հայաստանի սուլֆիդային հանքավայրերից անջատված թերմոսպիրոֆիլ ծծումբ և երկաթ օքսիդացնող բակտերիաներ	43
<i>Չիտյան Կ.Կ.</i> Ալկալոֆիլ բացիլների համեմատական բնութագիրը	46
<i>Նիկողոսյան Վ.Գ.</i> Klebsiella ցեղի դիագնոստիկները գարու արմատային համակարգում	51
<i>Արեւյան Լ.Ա.</i> Կաթնաթթվի ստացման երկփուլային մեթոդ	54
<i>Չիլ-Հակոբյան Լ.Ա., Խյիստովսկի Ե.Դ., Աղանյան Ս.Օ., Կինոսյան Ա.Հ.</i> Bacillus thuringiensis կուլտուրաների միջատասպան ակտիվության որոշումը շերամորդի միջոցով	56
<i>Չիլինգարյան Կ.Հ.</i> Bacillus thuringiensis և Bacillus sphaericus լարվիցիդ կուլտուրաների կենսունակությունը և միջատասպան ակտիվության վերարտադրումը հողում	61

Համառոտ հաղորդումներ

<i>Առաքելյան Ա.Ն., Բախչիևա Զ.Ն.</i> Զուգորդական կեղևում անդրբրտային պատասխանների շերտային վերլուծումը մարմնագալակապ կեղևի քայքայումից հետո	65
<i>Սևոյան Գ.Գ., Զուրարյան Ա.Ա., Բրուտյան Ռ.Ա.</i> Սիջավայրի pH-ի կարգավորումը L-արգինինի ստացման ժամանակ, սինթեզի արգելակումը ազոտով հաղթահարելու համար	68
<i>Պարոնյան Ա.Խ., Սալաթյան Ա.Ն.</i> Ֆոտոսինթեզող բակտերիաների կենսազանգվածի նստեցումը կոագուլացման մեթոդով	70
<i>Մաժինյան Ա.Բ., Գասպարյան Ա.Վ., Տատինցյան Կ.Կ.</i> Լիզոցիմի ակտիվությունը պերիոդոնտիտով հիվանդների բջույն	72
<i>Պոպով Զ.Գ., Սկրտումյան Ս.Կ., Շերբակովա Ե.Ն.</i> Լոշտակի (Bryonia alba) հյուսվածքային կուլտուրան	75
<i>Մանուկյան Գ.Ս.</i> Սևանա լճի և Նրա վտակների գամարիդների չափակշռային բնութագիրը և զանգվածի էներգետիկական համարժեքը	77
<i>Սիրումյան Լ.Ս., Տերտերյան Հ.Ե.</i> Ուռազգիների (Salicaceae) վուս գարգացող գալանվակները (Diptera, Cecidomyiidae) Հայաստանում	80
<i>Հարությունյան Գ.Ս., Հարությունյան Ռ.Գ.</i> Նոր տվյալներ Հայաստանի դենդրաֆլորայի ցետոֆիտներկայացուցիչների պտուղների և սերմերի վնասատուների մասին	82
<i>Հովհաննիսյան Ռ.Օ., Նալբանդյան Ս.Ա.</i> Լաբորատոր պայմաններում մակերևութային լանջի հոսքով քիմիական էլեմենտների դուրս բերման որոշման եղանակ	84

Լրատու

Պանդեյան Կ.Ս. Հայաստանի էկոլոգիական հիմնահարցերը «Անցում դեպի զարգացում» ծրագրի նախագծում	85
Նահապետյան Խ. Հ., Սարգսյան Զ.Ս., Հարությունյան Ռ.Ս. Կաստակաչառ գիտնականը (Ծննդյան 70 ամյակի առթիվ)	88
Սարկոսյան Լ.Ս. Նորայր Սարտիրոսի Սիսակյան (Ծննդյան 90-ամյակին)	90
Ռոմելա Սիքալեյի Դալաշյան	93
Եզն Սարգսի Հարությունյան	94

СОДЕРЖАНИЕ

Աղաճյանյան Ա.Մ. Реакция разных форм и гибридов томата на кастрацию цветков	3
Արությունյան Ք.Մ., Մարտիրոսյան Կ.Յ., Շիրինյան Գ.Տ., Կազարյան Ա.Ա., Կոչար Ն.Ք. Антропогенетическое исследование выходцев с территорий исторической Армении. Алашкерт (жители села Н.Геташен)	10
Մինասբեկյան Լ.Ա., Դանիելյան Ի.Տ., Գարիբյան Ժ.Վ., Վարդևանյան Ս.Օ., Սանոսյան Գ.Ա. Различия в уровнях метилирования и параметрах плавления ДНК в сухих и прорастающих семенах злаковых	14
Սետրոսյան Մ.Դ., Աղաճյանյան Ժ.Ա., Շամցյան Մ.Գ., Սոբոլյով Կ.Գ. Каллусообразование и органогенез в изолированной культуре топинамбура	18
Հախարյան Ա.Ս., Կարապետյան Է.Ա., Կրիստյան Ա.Ա. Изменение некоторых физико-химических параметров среды в процессе анаэробного роста бактерий	21
Աղաբալյան Ա.Տ., Հախարյան Ք.Ա., Դավթյան Օ.Կ. Сравнительная оценка противовоспалительной активности некоторых биополимеров	26
Օհանեսյան Գ.Գ., Բարսեղյան Ա.Ա. Влияние мутаций компонентов белоксинтезирующей системы на образование капсулярных полисахаридов у <i>Escherichia coli</i> K-12	30
Կազանչյան Ա.Փ., Սամվելյան Վ.Մ., Հախարյան Ք.Ա. Исследование некоторых свойств полинуклеотидов: свидетельства специфической рецепции	34
Ադամյան Մ.Օ. Новые штаммы галофильных бацилл	38
Վարդանյան Ն.Տ. Термоацидофильные серо- и железоокисляющие бактерии из сульфидных месторождений Армении	43
Չիտչյան Կ.Վ. Сравнительная характеристика алкалофильных бацилл	46
Նիկողոսյան Վ.Գ. Дiazотрофы из рода <i>Klebsiella</i> в корневой системе ячменя	51
Աբելյան Լ.Ա. Двухступенчатый метод получения молочной кислоты	54
Չիլ-Առաքելյան Լ.Ա., Խլիստովսկի Է.Դ., Ադամյան Մ.Օ., Կինոսյան Մ.Ա. Определение инсектицидной активности культур <i>Bacillus thuringiensis</i> с использованием тутового шелкопряда	56
Չилингարյան Կ.Օ. Жизнеспособность и репродукция инсектицидной активности ларвицидных культур <i>Bacillus thuringiensis</i> и <i>Bacillus sphaericus</i> в почве	61

Краткие сообщения

Արաքոլյան Տ.Ն., Բախուբեկյան Զ.Ն. Послойный анализ транскрипционных ответов в ассоциативной коре после разрушения соматосенсорной коры	65
Տեղադրյան Գ.Գ., Զարգարյան Ա.Տ., Բրուտյան Ք.Ա. Регулирование pH среды при ферментации L-аргинина для преодоления ингибиции синтеза азотом	68
Սարգսյան Ա.Խ., Մալախյան Մ.Ն. Осаждение биомассы фотосинтезирующих бактерий методом коагуляции	70
Մախինյան Ա.Բ., Գասպարյան Ա.Վ., Կրիստյան Վ.Գ. Активность лизоцима в слюне больных периодонтитом	72
Սոբոլյով Կ.Գ., Մկրտչյան Մ.Կ., Շերբախովա Է.Ն. Введение в изолированную культуру <i>Brucella abortus</i>	75
Մանուկյան Գ.Մ. Размерно-весовая характеристика и энергетический эквивалент массы	75

гаммарид озера Севан и его притоков	77
Мирумян Л.С., Тертерян А.Е. Галлицы (Diptera, Cecidomyiidae), развивающиеся на ивовых (Salicaceae) в Армении	80
Арутюнян Г.А., Арутюнян Р.Г. Новые данные о вредителях плодов и семян ксерофитных представителей дендрофлоры Армении	82
Оганесян Р.О., Налбандян М.А. Метод определения выноса химических элементов поверхностно-склоновым стоком в лабораторных условиях	84

Хроника

Даниелян К.С. Основные экологические вопросы Армении в проекте программы "Переход к развитию"	85
Нахпетян Х.А., Саркисян Дж.С., Арутюнян Р.А. Заслуженный ученый (к 70 летию со дня рождения)	88
Маркосян Л.С. Нораир Мартиросович Сисакян (90 лет со дня рождения)	90
Ромелла Михайловна Галачян	93
Ева Саркисовна Арутюнян	94

CONTENTS

<i>Aghajanian A.M.</i> Reaction of different forms and hybrids of tomato on castration of flowers	3
<i>Harutyunian R.M., Martirosian K.Yu., Shinnian G.S., Kazanian A.A., Kochar N.R.</i> Antropogenetic investigation of population migrated from territory of historical Armenia. Alashkert (inhabitants of v. N.Getashen)	10
<i>Minasbekian L.A., Danielian I.S., Gharbian J.V., Vardevanian P.O., Panosian G.A.</i> Differences of levels of methylation and parameters of melting DNA in dry and growing seeds of cereals	14
<i>Petrosian M.T., Aghajanian J.A., Shantsian M.G., Popov Yu.G.</i> Callus formation and organogenesis in isolated tissue culture of topinambur	18
<i>Zakarian A.P., Karagouljian E.A., Trchounian A.H.</i> Alteration of some physico-chemical parameters of medium in anaerobic growth conditions of bacteria	21
<i>Aghabalian A.S., Zakharian R.A., Davtian O.Ya.</i> Comparative evaluation of antitumour activity of some biopolymers	26
<i>Hovhanissian H.G., Barseghian A.A.</i> The influence of mutations of protein synthesising system components on formation of capsular polysaccharides of <i>Escherichia coli</i> K-12	30
<i>Kazanchian A.F., Samvelian V.M., Zakharian R.A.</i> Study of some properties of polynucleotides: the evidence of specific reception	34
<i>Adamian M.O.</i> New strains of halophilic bacilli	38
<i>Vartanian N.S.</i> Thermoacidophilic sulfur and iron oxidizing bacteria isolated from sulfide ore deposits of Armenia	43
<i>Chichian K.V.</i> Comparative characteristics of alcalophilic bacilli	46
<i>Nikoghosian V.G.</i> Diazotrophs of the genus <i>Klebsiella</i> from root system of barley	51
<i>Abelian L.A.</i> Two-steps method for lactic acid production	54
<i>Chil-Hakobian L.A., Khlistovski E.D., Adamian M.O., Kinonian M.H.</i> Determination of insecticide activity of <i>Bacillus thuringiensis</i> cultures by <i>Bombyx mori</i>	56
<i>Chilingarian K.H.</i> Viability and reproduction of insecticide activity of <i>Bacillus thuringiensis</i> and <i>Bacillus sphaericus</i> larvicide cultures in soil	61

Short communications

<i>Arakelian S.N., Bakhchieva Z.N.</i> Analysis of layers of transcallosomal replies in associated cortex after destroying of somatosensory cortex	65
<i>Savoyan G.G., Zurabian A.S., Brutian R.A.</i> Regulation of pH medium during production of L-arginine for overcoming the inhibition of biosynthesis by nitrogen	68

<i>Paronian A.Kh., Malatian M.N.</i> Precipitation of phototrophic bacteria biomass by method of coagulation	70
<i>Mazhinian A.B., Gasparian A.V., Tatintsian V.G.</i> Lysozyme activity in saliva of patients with periodontitis	72
<i>Popov Yu.G., Mkrumian M.K., Sherbakova E.N.</i> Tissue culture of Bryonia alba	75
<i>Manoukian G.M.</i> Characteristics of size-wight and energetic equivalent of mass Gammarus ssp. of Lake Sevan and its flows	77
<i>Mirumian L.S., Terterian A.E.</i> Gall-midges phytophages (Diptera, Cecidomyiidae) developing on Salix (Salicaceae) in Armenia	80
<i>Harutyunian G.A., Harutyunian R.G.</i> New data about pests of fruits and seeds of xerophyte representatives of Armenian dendroflora	82
<i>Hovhanissian R.O., Nalbandian M.A.</i> Method for determination removal of chemical elements by surface slope in laboratory conditions	84

Chronics

<i>Danielian K.S.</i> Main ecological questions of Armenia in Project of Programme "Transition to development"	85
<i>Nshapetian Kh.A., Sarkisian J.S., Harutyunian R.A.</i> Distinguished scientist (70-th years birthday)	88
<i>Markossian L.S.</i> Norair M. Sisakian (90-th anniversary of the birthday)	90
<i>Romella M. Galachian</i>	93
<i>Eva S. Harutyunian</i>	94